

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՌԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՒԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԿ



**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL ՄԱՅՐ ՏԱՆՏՐ

ԿԻՐԱԿԻ 17 Մարտ 2019

102

DIMANCHE, 17 Mars 2019



## ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

615 stgregorychurch@gmail.co Quebec, Canada H2V 3H2  
secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

**ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ  
L'ENFANT PRODIGE**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԵՆԵՆ**

**54. 11- 55. 13**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԵ**

**ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ 2-ՐԴ ՆԱՄԱԿԵՆ**

**6. 1- 7. 1**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԵՆ**

**ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ**

**15. 1- 32**

**Les lectures de la Bible d'aujourd'hui :**

**Romains 12.1-13.10**

**Matthieu 5.17-48**

**Պատարագիչ՝ Յոզեֆ Յովիլ  
ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ**

**Célébrant: Prêtre Paroissial**

**RÉV. PÈRE DAVID MARGARYAN**

**Առաւօտեան ժամերգութիւն 9:30-ին  
Office Matines à 9 :30**

**Ս. Պատարագ ժամը 10:30-ին  
La Sainte Messe à 10:30**

**Յոգեհանգստեան Պաշտօն կէսօրին  
Office de Requieme à Midi**

**Deacons - Acolytes**

**Choirmaster: Mr. Sarkis Barsemian**

**Organists: Mr. Karen Manucharyan**

**Mrs. Houri Bedrossian**

# ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ 2-ՐԴ ՆԱՄԱԿԷՆ

6. 1- 7. 1

Ուստի մենք ալ գործակից ըլլալով՝ կ'աղաչենք որ Աստուծոյ շնորհքը պարապ տեղ ընդունած չըլլաք: Վասն զի «Ընդունելի ժամանակի մը մէջ լսեցի քեզի», կ'ըսէ, «եւ փրկութեան օրը օգնութիւն ըրի քեզի»: Ահա՛ հիմա է ընդունելի ժամանակը, ահա՛ հիմա է փրկութեան օրը: Ոեւէ մէկուն գայթակղութիւն չենք պատճառեր, որպէս զի մեր պաշտօնը չարատաւորուի: Բայց ամէն բանի մէջ մեր անձը կ'ընծայենք՝ Աստուծոյ սպասաւորներու պէս՝ շատ համբերութիւնով վշտերու մէջ, տառապանքներու, նեղութիւններու, Օեծերու, բանտերու, խռովութիւններու, աշխատութիւններու, հսկումներու, ծովերու մէջ, Մաքրութիւնով, զիտութիւնով, երկայնամտութիւնով, քաղցրութիւնով, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութիւնով, արդարութեան զենքերով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է: Փառքով ու անարգութիւնով, գովութիւնով ու պարսաւանքով, մոլորեցնողներու պէս՝ ու ճշմարիտներ: Անձանօթներու պէս եւ ծանօթներ, մեռնողներու պէս եւ ահա կենդանի ենք, պատժուածներու պէս ու չենք սպաննուած: Տրտմածներու պէս ու միշտ ուրախ ենք, աղքատներու պէս ու շատերը կը հարստացնենք, բան մը չունեցողներու պէս եւ ամէն բան ստացած ենք: Մեր բերանը ձեզի բացւած է, ո՛վ Կորնթացիք եւ մեր սիրտը լայնցած: Դուք մեր կողմէն չէք նեղուիր, հապա ձեր ունեցած գութին կողմէ կը նեղուիր: Ուստի անոր հատուցում ընելու համար, իբրեւ որդիներուս կը խօսիմ ձեզի, դուք ալ դէպի զիս լայն բացէք ձեր սրտերը:

Անհաւատներուն հետ օտարախառն լծակից մի՛ ըլլաք. քանզի ի՞նչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ եւ ի՞նչ հաղորդակցութիւն ունի լոյսը խաւարին հետ եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարին հետ, կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ եւ ի՞նչ յարմարութիւն ունի

Աստուծոյ տաճարը կուռքերուն հետ. վասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք. ինչպէս Աստուած ըսաւ, թէ «Անոնց մէջ պիտի բնակիմ ու անոնց մէջ պիտի քալեմ եւ անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան»: «Ասոր համար ելէ՛ք անոնց մէջէն ու զատուեցէ՛ք, կ'ըսէ Տէրը, պիղծ բանի մի՛ դպչիք». «Ու ես ձեզ պիտի ընդունիմ»: «Եւ ես ձեզի Հայր պիտի ըլլամ ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք, կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

Ուստի, սիրելիներ, որովհետեւ մենք այս խոստումները ունինք, մեր անձերը մարմնի ու հոգիի ամէն կերպ պղծութենէ մաքրենք եւ սրբութիւնը կատարելագործենք Աստուծոյ վախովը:

## **ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 15. 1- 32**

Շատ մը մաքսաւորներ ու մեղաւորներ անոր կը մօտենային իրմէ լսելու համար: Իսկ փարիսեցիներ ու դպիրներ տրտունջ կ'ընէին ու կ'ըսէին. «Ասիկա մեղաւորները կ'ընդունի ու անոնց հետ կ'ուտ»:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Ձեզմէ ո՞վ է այն մարդը, որ եթէ հարիւր ոչխար ունենայ եւ անոնցմէ մէկը կորսնցնէ, իննսունըինը չի ձգեր անապատին մէջ ու այն կորսուածին ետեւէն երթար, մինչեւ զանիկա գտնէ: Ու երբ գտնէ, ուրախանալով իր ուսերուն վրայ կը դնէ զանիկա եւ տունը գալով, կը կանչէ բարեկամներն ու դրացիները ու անոնց կ'ըսէ. Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորսուած ոչխարս գտայ: Ձեզի կ'ըսեմ թէ այսպէս աւելի ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի համար, որ կ'ապաշխարէ, քան թէ իննսունինը արդարներու համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ»:

«Կամ թէ ո՞վ է այն կինը որ տասը դրամ ունենայ ու դրամ մը կորսնցնէ, ճրագ չի վառեր ու տանը մէջ աւել զարներ եւ զգուշութեամբ փնտռեր, մինչեւ գտնէ: Ու երբ գտնէ, կը կանչէ բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ. Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորսնցուցած դրամս գտայ: Այնպէս ալ, ձեզի կ'ըսեմ, ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջեւ մէկ մեղաւորի համար, որ կ'ապաշխարէ»:

Ապա ըսաւ. «Մարդ մը երկու որդի ունէր. Անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ. Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի իյնալու բաժինը տուր

ինծի: Ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը: Շատ օրեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր բաները հաւաքեց, հեռու երկիր մը գնաց եւ հոն անառակութեամբ ապրելով իր ունեցածը փճացուց: Բոլոր ունեցածը հատցուցած էր, երբ երկրին մէջ սաստիկ սով մը եղաւ ու ինք չքաւոր դարձաւ: Ուստի գնաց այն երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ: Ան ալ իր ազարակը դրկեց զանիկա՝ խոզեր արածելու համար: Հոն կը փափաքէր խոզերուն կերած եղջիրէն իր փորը լեցնել, Բայց մէկը չէր տար անոր: Այն ատեն ինքզինքին գալով ըսաւ. Քանի՛ բանտօրներ կան իմ հօրս տունը հացով լեցուած, ես հոս սովամահ կը կորսուիմ: Ելլեմ, երթամ իմ հօրս եւ ըսեմ անոր. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ ու քու առջեւըդ, Ա՛լ արժանի չեմ քու որդիդ ըսուելու, զիս քու վարձկաններէդ մէկուն պէս ըրէ»: Ու ելաւ իր հօրը գնաց: Մինչդեռ ինք շատ հեռու էր, հայրը տեսաւ զանիկա ու գուրջը շարժեցաւ եւ վազելով՝ անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց զանիկա: Որդին ալ ըսաւ անոր. Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ ու քու առջեւը եւ ա՛լ արժանի չեմ քու որդիդ ըսուելու: Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. Հանեցէք առաջին պատմուճանը ու հագցուցէք անոր եւ մատանի դրէք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը Եւ պարարտ զուարակը բերէք, մորթեցէք, ուտենք եւ ուրախ ըլլանք. Վասն զի այս իմ որդիս մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ: Սկսան ուրախութիւն ընել: Անոր մեծ որդին ազարակն էր, երբ ե-կաւ ու տանը մօտեցաւ, նուագարաններու եւ պարերու ձայն լը-սեց: Ծառաներէն մէկը իրեն կանչելով՝ հարցուց, թէ Այս ի՞նչ է Ա-նիկա ալ ըսաւ անոր. Եղբայրդ եկաւ ու հայրդ պարարտ զուարակը մորթեց, վասն զի ողջ առողջ ձեռք ձգեց զանիկա: Իսկ ինք բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել, ուստի իր հայրը դուրս ելլելով կ'աղաչէր անոր: Անիկա պատասխան տալով՝ ըսաւ հօրը. Ա-հա այսչափ տարի է, որ քեզի կը ծառայեմ ու բնաւ քու խօսքէդ դուրս չելայ ու ինծի երբէք ուլ մը չտուիր, որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի: Բայց երբ եկաւ այդ քու որդիդ, որ քու ստացուածքդ բոզերու հետ կերաւ, անոր մորթեցիք պարարտ զուարակը: Եւ հայրը ըսաւ անոր. Որդեակ, դուն միշտ ինծի հետ ես ու իմ բոլոր ունեցածս քուկդ է: Սակայն պէտք է ուրախ ըլլալ եւ խնդալ, վասն զի այս քու եղբայրդ մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ»:

## 2 Corinthiens

### 6.1-7.1

Ainsi donc étant ouvriers avec lui, nous vous prions aussi que vous n'ayez point reçu la grâce de Dieu en vain.

Car il dit : je t'ai exaucé au temps favorable et t'ai secouru au jour du salut; voici maintenant le temps favorable, voici maintenant le jour du salut.

Ne donnant aucun scandale en quoi que ce soit, afin que [notre] ministère ne soit point blâmé. Mais nous rendant recommandables, en toutes choses, comme ministres de Dieu, en grande patience, en afflictions, en nécessités, en angoisses, En blessures, en prisons, en troubles, en travaux, En veilles, en jeûnes, en pureté; par la connaissance, par un esprit patient, par la douceur, par le Saint-Esprit, par une charité sincère, Par la parole de la vérité, par la puissance de Dieu, par les armes de justice que l'on porte à la main droite et à la main gauche. Parmi l'honneur et l'ignominie, parmi la calomnie et la bonne réputation. Comme séducteurs, et toutefois étant véritables; comme inconnus, et toutefois étant reconnus ; comme mourants, et voici nous vivons; comme châtiés, et toutefois non mis à mort; Comme attristés, et toutefois toujours joyeux; comme pauvres, et toutefois enrichissant plusieurs; comme n'ayant rien, et toutefois possédant toutes choses.

Ô Corinthiens! notre bouche est ouverte pour vous, notre cœur s'est élargi. Vous n'êtes point à l'étroit au-dedans de nous, mais vous êtes à l'étroit dans vos entrailles. Or pour nous traiter de la même manière ( je vous parle comme à mes enfants) élargissez-vous aussi [à notre égard].

Ne portez pas un même joug avec les infidèles; car quelle participation y a-t-il de la justice avec l'iniquité? et quelle communication y a-t-il de la lumière avec les ténèbres? Et quel accord y a-t-il de Christ avec Bélial? ou quelle part a le fidèle avec l'infidèle?

Et quelle convenance y a-t-il du Temple de Dieu avec les idoles? car vous êtes le Temple du Dieu vivant, selon ce que Dieu a dit : j'habiterai au milieu d'eux, et j'y marcherai; et je serai leur Dieu, et ils seront mon peuple.

C'est pourquoi sortez du milieu d'eux, et vous en séparez, dit le Seigneur; et ne touchez à aucune chose souillée et je vous recevrai; Et je vous serai pour père, et vous me serez pour fils et pour filles, dit le Seigneur Tout-puissant.

Or donc [mes] bien-aimés, puisque nous avons de telles promesses, nettoignons-nous de toute souillure de la chair et de l'esprit perfectionnant la sanctification en la crainte de Dieu.

### **Luc 15.1-32**

Or tous les péagers et les gens de mauvaise vie s'approchaient de lui pour l'entendre. Mais les Pharisiens et les Scribes murmuraient, disant : celui-ci reçoit les gens de mauvaise vie, et mange avec eux.

Mais il leur proposa cette parabole, disant : Qui est l'homme d'entre vous qui ayant cent brebis, s'il en perd une, ne laisse les quatre-vingt-dix-neuf au désert, et ne s'en aille après celle qui est perdue, jusqu'à ce qu'il l'ait trouvée; Et qui l'ayant trouvée ne la mette sur ses épaules bien joyeux; Et étant de retour en sa maison, n'appelle ses amis et ses voisins, et ne leur dise : réjouissez-vous avec moi ; car j'ai trouvé ma brebis qui était perdue? Je vous dis, qu'il y aura de même de la joie au ciel pour un seul pécheur qui vient à se repentir, plus que pour quatre-vingt-dix-neuf justes, qui n'ont pas besoin de repentance.

Ou qui est la femme qui ayant dix drachmes, si elle perd une drachme, n'allume la chandelle, et ne balaye la maison, et ne [la] cherche diligemment, jusqu'à ce qu'elle l'ait trouvée; Et qui après l'avoir trouvée, n'appelle ses amis et ses voisines, en leur disant : réjouissez-vous avec moi; car j'ai trouvé la drachme que j'avais perdue? Ainsi je vous dis qu'il y a de la joie devant les Anges de Dieu pour un seul pécheur qui vient à se repentir.

Il leur dit aussi : un homme avait deux fils; Et le plus jeune dit à son père : mon père, donne-moi la part du bien qui m'appartient; et il leur partagea ses biens. Et peu de jours après, quand le plus jeune fils eut tout ramassé, il s'en alla dehors en un pays éloigné; et là il dissipa son bien en vivant dans la débauche. Et après qu'il eut tout dépensé, une grande

famine survint en ce pays-là; et il commença d'être dans la disette. Alors il s'en alla, et se mit au service d'un des habitants du pays, qui l'envoya dans ses possessions pour paître les pourceaux. Et il désirait de se rassasier des gousses que les pourceaux mangeaient; mais personne ne lui en donnait. Or étant revenu à lui-même, il dit : combien y a-t-il de mercenaires dans la maison de mon père, qui ont du pain en abondance, et moi je meurs de faim? Je me lèverai, et je m'en irai vers mon père, et je lui dirai : mon père, j'ai péché contre le ciel et devant toi; Et je ne suis plus digne d'être appelé ton fils; traite-moi comme l'un de tes mercenaires. Il se leva donc, et vint vers son père; et comme il était encore loin, son père le vit, et fut touché de compassion, et courant à lui, se jeta à son cou, et le baisa. Mais le fils lui dit : mon père, j'ai péché contre le ciel et devant toi; et je ne suis plus digne d'être appelé ton fils. Et le père dit à ses serviteurs : apportez la plus belle robe, et l'en revêtez, mettez-lui un anneau au doigt, et des souliers aux pieds; Et amenez-moi le veau gras, et le tuez, et faisons bonne chère en le mangeant. Car mon fils que voici, était mort, mais il est ressuscité; il était perdu, mais il est retrouvé. Et ils commencèrent à faire bonne chère.

Or son fils aîné était aux champs, et comme il revenait et qu'il approchait de la maison, il entendit la mélodie et les danses. Et ayant appelé un des serviteurs, il lui demanda ce que c'était. Et [ce serviteur] lui dit : ton frère est venu, et ton père a tué le veau gras, parce qu'il l'a recouvré sain et sauf. Mais il se mit en colère, et ne voulut point entrer; et son père étant sorti le pria [d'entrer]. Mais il répondit, et dit à son père : voici, il y a tant d'années que je te sers, et jamais je n'ai transgressé ton commandement, et cependant tu ne m'as jamais donné un chevreau pour faire bonne chère avec mes amis. Mais quand celui-ci, ton fils, qui a mangé ton bien avec des femmes de mauvaise vie, est venu, tu lui as tué le veau gras. Et [le père] lui dit : [mon] enfant, tu es toujours avec moi, et tous mes biens sont à toi. Or il fallait faire bonne chère, et se réjouir, parce que celui-ci, ton frère, était mort, et il est ressuscité; il était perdu, et il est retrouvé.



## ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահոց երրորդ կիրակին կը կոչուի Անառակի կիրակի, որովհետեւ այսօր կարդացուող Աւետարանը կը պատմէ Անառակ Որդիին առակը (Ղուկ. 15:11-32): Մարդ մը երկու զաւակ ունէր: Կրտսեր որդին հօրմէն կը խնդրէ, որ իր ունեցուածքը բաժնէ իր երկու որդիներուն միջեւ եւ իր բաժինը կ'առնէ ու հօրենական տունէն կը հեռանայ: Հոն զեխ կեանք վարելով իր ամբողջ ունեցածը կը վատնէ ու կը սրնանկանայ: Կրտսեր որդին շատ կը զղջայ ու իր այս տխուր վիճակին մէջ կը յիշէ հօրը տունը եւ կ'որոշէ վերադառնալ ըսելով.

«Հա՛յր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, եւ ա՛յլ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ըրէ՛ զիս վարձկաններէդ մեկուն պէս»:

Հայրը զակին զղջումը տեսնելով կ'ուրախանայ եւ գրկաբաց զայն կ'ընդունի: Աւագ որդին կը դժգոհի, որ ինք միշտ հօր կողքին եղած է, բայց նման պատիւի չէ արժանացած: Հայրն ալ կ'ըսէ.

“Որդեա՛կ, դուն միշտ ինծի հետ ես, ու ամբողջ ունեցածս քո՛ւ կը ե: Սակայն պէտք էր զուարճանալ եւ ուրախանալ, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ու վերապրեցաւ, կորսուած էր՝ եւ գտնուեցաւ»:

Առակին մէջ հայրը կը խորհրդանշէ Աստուած եւ մեզի համար աւելի դիւրին կը դառնայ հասկնալու, թէ ինչու մենք Աստուծոյ կը կոչենք «Հայր»: Անառակ որդին եւ աւագ որդին կը ներկայացնեն մեղաւոր մարդոց եւ արդարներուն: Առակը ցոյց կու տայ, որ Հայր Աստուած ալ իր գիրկը կ'ընդունի անառակ որդիին նման ապաշխարող մեղաւորները: Իսկ անոնք, որ աւագ որդւոյն պէս կը կարծեն թէ արդար են, պէտք է խուսափին իրենց մասին չափազանց բարձր կարծիք ունենալէ եւ ուրախութեամբ ընդունին ամէն մէկ մեղաւորի ապաշխարութիւնն ու դէպի Աստուած ու եկեղեցի անոնց դարձը:

## Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան

### Մարտ – Mars

18, Երկուշաբթի – ԺԵ. Օր Մեծի Պահոց

Lundi 18 – 15ème jour du Jeûne du Carême

19, Երեքշաբթի – ԺԶ. Օր Մեծի Պահոց

Mardi 18 - 16ème jour du Jeûne du Carême

20, Չորեքշաբթի – ԺԷ. Օր Մեծի Պահոց

Mercredi 20 - 17ème jour du Jeûne du Carême

21, Հինգշաբթի – ԺԸ. Օր Մեծի Պահոց

Jeudi 21 – 18ème jour du Jeûne du Carême

22, Ուրբաթ - ԺԹ. Օր Մեծի Պահոց

Vendredi 22 - 19ème jour du Jeûne du Carême

23, Շաբաթ – Ի. Օր Մեծի Պահոց

Տօն Սրբոցն Յովհաննու Երուսաղիմա Հայրապետին եւ  
Հայրապետին մերոյ Յովհաննու Օձնեցոյն, եւ վարդապետացն  
մերոյ Յովհաննու Որոտնեցոյն եւ Գրիգորի Տաթեւացոյն:

Samedi 23 – 20ème jour du Jeûne du Carême

Fête St. Jean, Patriarche de Jérusalem, de notre Patriarche St. Jean  
d’Odzoun, de nos vartabeds St. Jean Vorodnètsi  
et St. Grégoire de Datèv.

## ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

«Գոյութիւն ունի ամենատես Աստուած, անոր համար  
գոյութիւն չունի որեւէ կոյր դէպք»:

Ս. Նիկոլայ արք. Վելիմիրովիչ

«Ինչ ալ ընես, մտածէ այն մասին, որ Աստուծոյ փա-  
ռաբանութիւնը քու գլխաւոր նպատակդ ըլլայ»:

Ս. Յովհաննէս Բոսկո (Դոն Բոսկո)



## Հոգևոր Հովիւի Պատգամը

«Ելլեմ երթամ Հօրս մօտ»  
(Ղուկասու 15:18)

Միրելի հաւատացեալներ,  
ահաւասիկ Մեծ Պահոց շրջանի երրորդ հանգրուանին հասած ենք: Երբ աւետարանը կարդացուի, կը խօսուի անառակ որդիի առակին մասին: Սակայն իմ կարծիքովս, պէտք է զայն կոչել՝ Ողորմած հօր առակը: Եկեղեցին մեզ կը հրաւիրէ այս առակին ընթերցումով, քառասնորդաց շրջանին, ապաշխարելու եւ երկնաւոր մեր Հօր ողորմութեան վրայ վստահելու:

Որդւոյն գործած յանցանքը կրկնակի է, որովհետեւ նախ՝ իր ժառանգութիւնը կը պահանջէ հօրը ողջութեան ատեն եւ երկրորդ՝ կը լքէ իր տունը եւ կ'երթայ աշխարհ, անառակ կեանք մը ապրելու համար, հեռու իր ընտանիքէն: Ամէն երիտասարդ, երբ որոշ տարիքի մը հասնի, կ'ուզէ ազատուիլ հօր եւ մօր իշխանութենէն, ազատ ու անկախ ապրիլ եւ իր բոլոր փափաքները իրականացնել անսանձ կեանք մը ապրելով: Սակայն չա՛նդրադառնար թէ այսպէտով կը հեռանայ զինք սիրող եւ իր վրայ գուրգուրացող իր ծնողքէն ու հարազատներէն, կարծելով գտնել այդ սէրը ուրիշ շրջանակներու մէջ:

Փորձառութեան շրջան մը կայ կեանքին մէջ գոր կամայ թէ ակամայ, ամէն անձ կապրի, որուն ընթացքին, վստահած իր անձնական ուժերուն, կը փորձէ կանգուն մնալ եւ դէմ դնել ամէն տեսակի դժուարութիւններու: Իսկ եթէ այս առակը հոգեւոր գետնի վրայ դնենք, պիտի տեսնենք թէ ինչպէս ամէն մարդ, տակաւ առ տակաւ կը հեռանայ Աստուծմէ եւ իր ստացած կրօնական ու բարոյական սկզբունքները անտեսելով, կապրի այնպիսի կեանք մը, ուր ամէն ինչ միայն նիւթականի կը կապուի:

Մեր իւրաքանչիւրին կեանքին մէջ, նիւթականը այնքան մեծ տեղ գրաւած է, որ յաճախ կը մոռնանք մեր հոգիով զբաղիլ, կամ գէթ մտածել թէ անմահ հոգի մը ունինք, որուն փրկութեան համար եւս ջանք պէտք է թափենք: Չկարծենք թէ երկնքի դռները լայն բացուած են մեր առջեւ եւ Տէրը ձեռքերը բաց՝ կը սպասէ մեր ժամանումին:

Այո, Տիրոջ ձեռքերը, սիրող հօր մը նման միշտ պատրաստ են մեզ ընդունելու, սակայն պայմանաւ որ մենք կատարենք առաջին քայլը դէպի մեր Արարիչն ու Հայրը: Նման անառակ որդիին, որ վերջապէս մտածեց, յետին չքաւորութեան մէջ, թէ ինք հայր մը ունի, ընտանիք մը ունի եւ հոն՝ կարող է գտնել ամէն հանգիստ եւ օգնութիւն. ինքն իրեն ըսաւ. «Ելլեմ երթամ հօրս մօտ եւ խնդրեմ որ զիս ընդունի հօրենական տան մէջ, գէթ որպէս մէկը իր ծառաներէն»:

Ապաշխարութեան առաջին քայլը կը կայանայ իր կացութենէն դուրս գալու մէջ, ցեխէն վեր բարձրանալու մէջ: Ելլեմ մեղքերու տիղմէն, դուրս գամ նիւթական եւ այլ մտահոգութիւններու մղձաւանջէն, որպէսզի կարենամ իմ հոգիիս մասին խորհիլ եւ զոջալով իմ անցեալի կեանքիս վրան, ջանամ մօտենալ իմ նախնական արդարութեանս եւ անմեղութեանս, Տիրոջ հոգածու խնամքին ներքեւ:

Հաւատաւոր հայորդիք, այս առակը մեզի ցոյց կու տայ թէ Տէրը ամէն օր անհամբեր կը սպասէ մեզի եւ պատրաստ է տալու մեզի մեր նախնական փառքն ու հանգստութիւնը, նոյնիսկ եթէ մենք մեզի արժանի չենք համարեր անոր: Մեր վրայ պիտի դնէ անմեղութեան պատմուճանը եւ մեզի պիտի ընծայէ իր ամենաթանկագին նուէրը: Մեր մատին պիտի անցընէ ոսկիէ մատանին, որպէսզի մեզի տայ այն իշխանութիւնը, որ ունէինք երբ որոշեցինք լքել զինք եւ հեռանալ իրմէ: Ի վերջոյ պարարտ եզին զոհը մեզի պիտի ընծայէ այն համոզումով, թէ՛ մեր տեղը երբեք չ'է կորսուած, այլ մեծ խնամքով պահպանուած է:

Երկնքի արքայութիւնը ահա մօտեցած է. Ապաշխարանքով ու աղօթքով միայն պիտի կարենանք մտնել այնտեղ, եւ գրաւել մեզի յատկացուած տեղը, արդ շտապեցէք եւ պատրաստուեցէք, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

*Օրհնութեամբ՝  
Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան*



## **ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ**

### **ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԽՆԴԻՆԼՈՒ ԱՂՕԹՔ**

Քու իմաստութիւնդ դրկէ քու սուրբ երկինքէդ, քու փառքի աթոռէդ, որպէսզի գայ եւ իմ մէջս հանգչի, եւ գիտնամ թէ ինչ կը կամենաս դուն: Որովհետեւ անիկա գիտէ եւ կը հասկնայ ամէն բան եւ զգաստութեամբ պիտի առաջնորդէ զիս գործերուսմէջ: Անիկա իր փառքով պիտի պահպանէ զիս, եւ գործերս ընդունելի պիտի ըլլան, արդարութեամբ պիտի դատեմ քու ժողովուրդդ եւ արժանի պիտի ըլլամ հօրս աթոռին: Արդարեւ, ո՞վ կրնայ Աստուծոյ խորհուրդները գիտնալ, կամ ո՞վ կրնայ Տիրոջ կամքը հասկնալ: Մահկանացուներուս դատումները խախուտ են եւ մեր միտքը կը մոլորի յաճախ, որովհետեւ կորստական այս մարմինը կը ծանրացնէ հոգին, հողէղէն այս յարկը կը ծանրացնէ միտքը. այնքան՝ որ հազիւ մեզ շրջապատող իրերուն մասին գաղափար մը կը կազմենք, դժուարաւ կը գտնենք նոյնիսկ ինչ որ մեր հաստողութեան մէջ է, ու՞ր մնաց գիտնալ ի՞նչ կայ երկինքի մէջ: Ո՞վ պիտի կարենար քու խորհուրդներդ գիտնալ, ո՞վ Տէր, եթէ դուն իմաստութիւն չտայիր եւ Սուրբ Հոգիդ չըրկէիր բարձունքէդ: Անոնցմով էր որ մարդիկ իրենց ճամբան ուղղեցին եւ սորվեցան՝ ինչ որ դուն կը կամենաս, եւ քու իմաստութեամբդ փրկուեցան:

### **IMPLORATION A LA SAGESSE**

Or la Sagesse est avec toi, elle qui sait tes œuvres; elle était là quand tu fis l'univers; elle connaît ce qui plaît à tes yeux, ce qui est conforme à tes décrets. Des cieus très saints, daigne l'envoyer, fais-la descendre du trône de ta gloire. Qu'elle travaille à mes côtés et m'apprenne ce qui te plaît. Car elle sait tout, comprend tout, guidera mes actes avec prudence, me gardera par sa gloire. Alors mes œuvres te seront agréables, je jugerai ton peuple avec justice, et serai digne du trône de mon père.

Quel homme peut découvrir les intentions de Dieu? Qui peut comprendre les volontés du Seigneur? Les réflexions des mortels sont incertaines, et nos pensées, instables; car un corps périssable appesantit notre âme, et cette enveloppe d'argile alourdit notre esprit aux mille pensées. Nous avons peine à nous représenter ce qui est sur terre, et nous trouvons avec effort ce qui est à notre portée; ce qui est dans les cieus, qui donc l'a découvert? Et qui aurait connu ta volonté, si tu n'avais pas donné la Sagesse et envoyé d'en haut ton Esprit Saint? C'est ainsi que les sentiers des habitants de la terre sont devenus droits; c'est ainsi que les hommes ont appris ce qui te plaît et, par la Sagesse, ont été sauvés.

# ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՅ

**DON**  
**À L'ÉGLISE**



**DONATION**  
**FOR THE CHURCH**

## **CHURCH:**

**Manoir Gouin Seniors \$100**

### **Wednesday Night Hesgoum Service:**

**Mrs. Lenya Kalepdjian & Mr. Michel Toplaian \$40,**  
**Karine Topalian \$20**

### **IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

#### **THE LATE LEVON MOURADIAN:**

**Mr. & Mrs. Arden & Christine Dervishian \$200,**

**Mr. Sarkis Sarkissian, Mr. & Mrs. Alex Kunter,**

**Mrs. Astri Mouradian, Mrs. Flora Jayawant, Mr. Azad**

**Metshagopian \$100, Mr. Ross Bagdasaryan \$75,**

**Mr. & Mrs. Sebouh & Anoush Kermadjian,**

**Mr. & Mrs. Pierre & Alice Mazlounian,**

**Mr. & Mrs. Philip & Nicole Yacoubian,**

**Mr. Diran Boyadjian, Mrs. Seta Boyadjian, Mr. & Mrs. Ari&**

**Beatrice Bagdasaryan, Dr. Haig & Dr, Sylvia Baltadjian,**

**Mrs. Nairi Majakian,**

**Mr. & Mrs. Nuran & Hasmig Cankul,**

**Mrs. Sonia Tachdjian, Mr. & Mrs. Harry & Jacqueline Topikian,**

**Mr. Hagop Karghaian \$50,**

**Mr. & Mrs. Boghos & Sirvart Kichian,**

**Mr. & Mrs. Raffi & Siran Chitilian \$25**

#### **THE LATE KARMEN - HAYGANUS JAMKARYAN:**

**Mr. & Mrs. Krikor & Agavni Culhaoglu \$100, Mr. & Mrs. Tavit &**

**Arpine Gungormezzer \$100, Mr. & Mrs. Berc Meneyan,**

**Mr. & Mrs Jeff & Ani Tchaderjian \$50,**

**Mr. Levon Simonyan \$30,**

**Mr. Aram Der Movsesyan \$20**

#### **THE LATE AKABI VARTANYAN:**

**Mr. Hovsep Keorhajian \$200,**

**Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian,**

**Mr. & Mrs. Carlo Pilafian, Mr. Kevork Keorhadzian \$100,**

**Mr. & Mrs. Martin & Sossi Marasliyan,**

**Mr. & Mrs. Avedis & Mari Basmacioglu \$50,**

**Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$40,**

**Mr. Haroutiun Ballian \$30, Miss Eva Matian,**

**Mr. & Mrs. Krikor & Rosa Dikranian \$20**

**HOKEHANKISD:**

**THE LATE ARTO ARTON:**

Mrs. Heyna Boghossian \$300,  
Mrs. Jeanette Vartazarmian \$100

**THE LATE AYDA BELER:**

Mr. Haik Manoukian \$50,  
Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$25

**THE LATE MANUSAK HARPUT:**

Mr. Armand Harput & Mrs. Nadya Karagoz \$50

**THE LATE AZAD BURNUK:**

Mrs. Nadya Fenerci & Family \$150

**THE LATE TANKRET ERMEN:**

Mrs. Hilda Ermen, Mr. & Mrs. Nuran & Hasmig Cankul \$50

**THE LATE TAKVORIAN & CANKUL FAMILIES:**

Mr. & Mrs. Nuran & Hasmig Cankul \$50

**THE LATE DERKEVORKIAN FAMILY:**

Dr. & Mrs. Hrair & Manoush Derkevorkian \$100

**THE LATE RUDIK HAKOBYAN:**

Mrs. Nelli Mashuryan \$100

**ՅԱՒԱԿՅԱԳԻՐ**



Ս. Գրիգոր Լուսաւորիչ

Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ  
Յոգեւոր Յովին ու Ծխական Խորհուրդը  
Ողբացեալներ՝

**ԳԱՐՄԵՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԺԱՍԳԱՐԵԱՆԻ  
(KARMEN HAYGANUS JAMKARYAN)**

**ԱԳԱՊԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ-ՔԵՕՐՀԱԾԵԱՆԻ  
(AKABI VARTANYAN-KEORHADZIAN)**

Մահուան տխուր առիթներով  
Իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն  
հանգուցեալներու բոլոր պարագաներուն,  
աղօթելով առ Աստուած, որ անոնց հոգիները  
Երկնային Արքայութեան արժանանան:



## ԽՈՐՀՈՒՐԴ ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ

Այն հաւատացեալները, որոնք իրենց հանգուցեալ սիրելիին կամ հարազատին համար ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ կը խնդրեն, պէտք է նկատի ունենալ թէ անհրաժեշտ է Սուրբ Պատարագի սկիզբէն ներկայ գտնուիլ եկեղեցի եւ մասնակցիլ աղօթքներուն. վասն զի, Սուրբ Պատարագի վերջաւորութեան կատարուելիք Հոգեհանգստեան Պաշտօնէն գատ, Պատարագիչ քահանան իր լուռ աղօթքներուն մէջ եւս կը յիշէ մեր բոլոր ննջեցեալներն ու յատկապէս անոնք՝ որոնց համար խնդրանք մատուցուած է:

## CONSEIL POUR LES MESSES DE REQUIEM

Nous informons les personnes qui désirent faire un REQUIEM à l'intention de leur chers disparus, qu'elles doivent être présentes à l'église dès le début de la Sainte Messe puisque le père évoque le nom des défunts dans ses prières cachées pendant la Sainte Messe. Il est même préférable de donner le nom des défunts la veille en prévenant l'Église ou en contactant le Père.

### ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Քրիստոս Աստուծոյ որդին, որ անոխակալ եւ բարեգութ ես,  
քու արարչական սիրովդ գթա  
հանգուցեալ ծառաներուդ հոգիներուն:  
Յիշէ զանոնք արքայութեանդ գալստեան մեծ օրը:  
Արժանի ըրէ ողորմութեան, քաւութեան  
եւ մեղքերու թողութեան:  
Չանոնք սուրբերուդ աջակողմը դասելով պայծառացուր :  
Որովհետեւ դուն ես ամենուն Տէրն ու արարիչը.  
ողջերուն եւ մեռելներուն դատաւորը:  
Եւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնը եւ պատիւը.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեան, ամէն:



**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ԿԻՐԱԿԻ, 17 Մարտ 2019**



Պր. Ժիրայր Կազերեանի, Եւ համայն իր Սոկրեալի  
ընկերներուն Եւ բարկամներուն խնդրանքով  
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իր  
սիրեցեալ ընկերոջ՝

**Բարեշնորհ Սարկաւազ՝**

**«Ներսէս Շնորհալի» Շքանշանակիր**

**ՀԱՅԿ ՄԻՍԱԶԵԱՆԻ**

**(HAIG MISAKYAN)**

(մահացած Թորոնթօ)

մահուան 40-ին առիթով

սուրճի սպասարկութիւն *Վաչէ Յովսէփեան* սրահին մէջ:



Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդին,  
Տիկեանց Յանձնախումբին  
Եւ բոլոր Յարակից Մարմիններուն փափաքով,  
Եւ Պր. Վրեժ Նիկողոսեանի  
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իրենց սիրեցեալ կնոջ՝

**Եկեղեցւոյ Եւ ազգային բարերարուհի**

**ԻՄԱՍՏՈՒՀԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ**

**(IMASDUHI NIGOGOSSIAN)**

մահուան 2-րդ տարելիցին առիթով

Սուրճի սպասարկութիւն

*Մարի Մանուկեան* սրահին մէջ:



Տօքթ. Հրայր Եւ Տիկ. Մանուշ Տէր Գեորգեանի,  
Տ. Եւ Տիկ. Արա Եւ Անի Տէր Գեորգեանի,  
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իրենց սիրեցեալ մօր՝

**ԳՈՂԱՐ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆԻ**  
**(KOHAR DERKEVORKIAN)**

մահուան 21-րդ տարելիցին առիթով  
իրենց սիրեցեալ հօր՝

**ՏՕԶԹ. ԳՐԻԳՈՐ**  
**ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆԻ**

**(DR. KRIKOR DERKEVORKIAN)**

մահուան 36-րդ տարելիցին առիթով  
իրենց սիրեցեալ մեծ մօր՝

**ՓԱՌԻԿ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ**  
**(PARIG DIKRANIAN)**

մահուան 46-րդ տարելիցին առիթով  
ինչպէս նաեւ՝

իրենց սիրեցեալ հօրեղբօր զաւկին՝  
**ՆՈՐԱՅՐ (ՊՕՊ)**

**ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆԻ**

**(NORAIR (BOB) DERKEVORKIAN)**

մահուան 14-րդ տարելիցին առիթով



Տ. Եւ Տիկ. Արման Եւ Անի ՍԵԼԿԵՆԻ,  
Տ. Եւ Տիկ. Վահէ Եւ Արլին Մարունեանի  
Եւ զաւակներուն,

խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իր սիրեցեալ մօր Եւ մեծ մօր՝

**ԹԱԳՈՒՅԻ**

**ՍԵՓՈՅԵԱՆ-ՍԵՒԿԵՆԻ**  
**(TAKUHI SEPOYAN-SEVGEN)**

մահուան 3-րդ տարելիցին առիթով:



Պր. Մելքոն Տեյիրմենթաշի եւ ընտանիքին,  
Սեդա Տեյիրմենթաշի,  
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իրեց սիրեցեալ մօր՝

**ԱՆՆԱ**

**ՊԱԼՃԻՕՂԼՈՒ-ՏԵՅԻՐՄԵՆԹԱՇԻ**  
**(ANNA BALCIOGLU-DEGIRMENTAS)**

մահուան 2-րդ տարելիցին առիթով:



**ՏԵՐԸ ՅԻՇԷ ՆՆՁԵՑԵԱԼՆՆԵՐԸ**

**ԵՒ**

**ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՅՆԷ**

**«ՈՂՋՈՅՆ»-Ի ԲԱՆԱԶԵԻՆԵՐ  
SALUT DE PAIX**

Յարգելի հաւատացեալներ,  
Սուրբ Պատարագի ընթացքին «Սուրբ Ողջոյն» կը  
փոխանակենք:

Այդ առթիւ, «Ողջոյն» տուողը պէտք է ըսէ.-  
Pendant la Sainte Liturgie, on échange le baiser de la paix.

Celui qui salue dit:

**1) Յունուարի 5-էն մինչեւ 13-ը:**

**Du 5 au 13 Janvier**

**Ծնունդի ութ օրերուն.-**

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ est né et s'est révélé»

**2) Զատիկէն մինչեւ Համբարձում.-**

**À partir de Pâques jusqu'à l'Ascension.-**

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՑ»

«Le Christ est ressuscité d'entre les morts»

**3) Միւս օրերուն.-**

**Les autres jours.-**

«ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՁ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ s'est révélé parmi nous»

«Ողջոյն» ստացողը պէտք է պատասխանէ .-

Celui qui reçoit le salut réponds:

**1- Ծնունդի ութ օրերուն.-**

«ՕՐՀՆԵԱԼ Է ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Naissance du Christ»

**2- Զատիկէն մինչեւ Համբարձում.-**

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Résurrection du Christ»

**3- Միւս օրերուն.-**

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Révélation du Christ»



## **ՆԻՍՏ ՈՒ ԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍԷՋ**

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հըրաւիրենք հետեւեալ պարագաները.

1. Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդութիւն ստանալէ առաջ:
2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձենան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:
3. Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագուրումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:
4. Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արարողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատրաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պետք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ : Եկեղեցին ա-դօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՈՒՈՒԹԻՒՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ պետք է տիրէ:

## **OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER**

Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:

- 1) Les fidèles doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.
- 2) Les femmes doivent avoir la tête couverte pour communier.
- 3) Chaque fois que nous entrons dans l'Eglise pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.
- 4) Il est rappelé que l'Eglise est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.

Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.

**Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**

Սիրելի հաւատացեալներ,  
Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի,  
թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ  
**Կայքէջը - Website [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**  
Ուր կարելի է գտնել Եկեղեցւոյ յայտարարութիւնները  
եւ ձեռնարկները:

Կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները  
եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն  
համացանցային դրութեամբ:  
Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Chers Paroissiens,  
Nous avons le plaisir de vous informer  
de la récente mise à jour de notre  
**Site: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**  
Ou vous trouvez les dernières nouvelles des activités  
et des événements.  
*Nous remercions de votre soutien!*

Dear Parishioners,  
We are glad to inform you our Church's newly developed  
**Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**  
where you will read the latest church news and events,  
meanwhile you can also make your online church donations  
and benefiting from other possibilities of our Website.  
*Thank you for your support!*

### **Ուշադրութիւն Մեր Սիրելի Հաւատացեալներուն**

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէ ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:

Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

*Ծիական Խորհուրդ*

### **Attention to our beloved parishioners**

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.



## ՀՍԿՈՒՄԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

*Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին*

*Մարտ 6 – Ապրիլ 18, 2019*

**Մարտ 6 – Զարոգիչ՝ Յոզ. Հայր Վարդան Վրդ. Թաշճեան**

*Պահոց Ընթրիք – Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան*

**Մարտ 13 – Զարոգիչ՝ Արժ. Տ. Տրդատ Զինյ. Թաշճեան**

*Պահոց Ընթրիք – Թէքէեան Սշակութային Միութիւն*

**Մարտ 20 – Զարոգիչ՝ Արժ. Տ. Կոմիտաս Զինյ.**

**Միրզախանեան**

**Հոգեւոր Հովիւ- Լաւալի Ս. Խաչ Հայց. Առաք Եկեղեցւոյ**

*Պահոց Ընթրիք – Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Ընտանիք*

**Մարտ 27 – Զարոգիչ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան**

**Առաջնորդ Գանատահայոց Թեմի**

*Պահոց Ընթրիք – Փառանձեմ Գեորգեան, Թամար եւ  
Շողիկ Գրիգորեան*

**Ապրիլ 3 – Զարոգիչ՝ Գերյ. Հ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան**

**Ժողովրդապետ Հայ Կաթողիկէ Համայնքի**

*Պահոց Ընթրիք – Տիկ. Ռոզ Տիգրանեան*

**Ապրիլ 10 – Զարոգիչ՝ Պատուելի Յովհաննէս Սվաճեան**

**Հոգեւոր Հովիւ - Հայ Աւետարանական Եկեղեցւոյ**

*Պահոց Ընթրիք – Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք*

**Ապրիլ 18 – Աւագ Հինգշաբթի**

**Զարոգիչ՝ Արժ. Տ. Դաւիթ Զինյ. Մարգարեան**

**Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ**

**Մայր Եկեղեցւոյ**

**Պահոց Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ**

**«Մարի Սանուկեան» սրահին մէջ**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 /

Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com



ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

# ՄԻՋԻՆՔ

Կազմակերպութեամբ՝  
Տիկնանց Յանձնախումբին  
Շաբաթ, 30 Մարտ 2019

Արևազայի ժամերգութիւն  
առաւօտեան ժամը 11-ին:

ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՒ  
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Մասնակցութեամբ՝ ՄԱՐԹԷՆ ԵՕՐԿԱՆՑԻ  
ԵՒ

Առ ի գնահատանք Տիկնանց Յանձնախումբին  
Բանախօսութիւն  
Նիւթ՝

«Կինը եւ Եկեղեցին»

Եկեղեցոյ Մարի Մանուկեան սրահին մէջ:

Մուտքի նուէր՝ \$20

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Tel: (514) 279- 3066  
secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca







**ՀԱՅՑ. ԱՌԱՋ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

**ԾԱՂԿԱԶԱՐԴ  
ԵՒ  
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՅՆՈՒԹԵԱՆ ՕՐ**

**ԿԻՐԱԿԻ, 14 ԱՊՐԻԼ 2019**

Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 9:30  
Սր. Պատարագ՝ ժամը 10:30

Յաւարտ Սր. Պատարագի պիտի կատարուի  
Մանուկներու Օրհնութեան կարգ

Դռնբացեք՝ ժամը 12:30

**ԱՄԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ**

Հիւրընկալութեամբ՝  
«ԿԱՄԱՐ» Երիտասարդական Միութեան  
«Մարի Մանուկեան» սրահին մէջ:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2  
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-



# ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Սիրելի հաւատացեալներ,

Եկեղեցւոյ Սուրբ Սեղանը, որ պատարագեալ Փրկիչի իջեւանն է, ամէն Կիրակի եւ յատկապէս տաղաւար տօներուն զեղեցիկ եւ պայծառ պահելու համար կոչ կ'ուղենք Ձեզի, որ Ձեր գործօն եւ արդիւնաւետ մասնակցութեամբ կամ ծաղիկներով զարդարել Տիրոջ Ս. Սեղանը, զորս աղբիւրն է Կենաց եւ Իմաստութեան:

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ կամ ծաղիկներու մատուցմամբ զարդարուն պահեն Տիրոջ Ս. Խորանը, կրնան կապ պահել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ (514) 279- 30

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ  
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵԼՈՐ ԶՐՈՅՑ**

**Մեր սիրելի հաւատացեալներուն  
ուշադրութեան կը յանձնենք թէ  
Մեծ Պահոց շրջանին առժամաբար մեր  
Հոգեւոր Զրոյցները կը դադրեցնենք:  
Կը վերսկսինք Զատիկէն ետք, որուն  
թուականն ու մանրամասնութիւնները կը  
հաղորդենք:**

Շնորհակալութիւն  
Հոգեւոր Հովիւ եւ Ծխական խորհուրդ  
Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ

**ÉTUDES BIBLIQUES  
ET  
CAUSERIES SPIRITUELLES**

**Nous avisons à nos fidèles  
que durant la période de carême nous  
arrêterons temporairement nos soirées  
de causeries spirituelles.**

**Nous recommencerons après Pâques et  
nous vous informerons la date et les détails.**

En vous remerciant,  
Curé de la Paroisse et Conseil paroissial  
Cathédrale arménienne St-Grégoire l'Illuminateur

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:  
(514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Մայր Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

**École de dimanche**  
**Pour les enfants de 6 à 14 ans**

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
  - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմութեան Եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ  
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար  
հեռաձայնել՝ Եկեղեցոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Զիւլ, Սարգստեան



**École de dimanche**  
**Pour les enfants de 6 à 14 ans**  
**Dans une ambiance chaleureuse et amicale on**  
**Offre aux enfants :**

- Initiation aux Psaumes et chants
- **Connaissance de la langue arménienne**
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

**Chaque dimanche à 11 heures**

Pour plus amples informations et inscription  
Contacter le secrétariat de l'Église (514) 279-3066  
Père David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ հովանու ներքոյ գործող Կիրակնօրեայ Վարժարանը, ներշնչուելով նոր սերունդի հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութենէն՝ անմիջական կարիքն ունի Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն լեզուներ դաստանող մասնագէտներու, սիրայօժար սկզբունքով:



- Դասընթացքները պիտի կատարուին Կիրակի օրերը ժամը 11-էն սկսեալ:

- Հետաքրքրուողներէն կը խնդրենք դիմել Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:

կամ

- Արեւմտահայերէնի պատասխանատու՝ Շողիկ Գուշաք-ճրեանին (514) 690-2890:

Արեւելահայերէնի պատասխանատու՝ Ալինա Պեժանեանին (438) 889-8167:

Հոգեւոր Հովիւ  
Եւ  
Միս. Խորհուրդ



Ս. Գրիգոր Լուսաւորիչ  
Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse  
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի  
կ'ունենան

Կիրակի օրերը կէսօրէ ետք, ժամը 1:30-ին:

Les répétitions de la chorale des Jeunes ont lieu  
Les dimanches à 13:30 heures

Յաւելելալ մանրամասնութեանց համար կապ  
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de  
l'église.

### Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան


#### Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու  
հիմնական երաժշտութեան նորթաները, միաժամանակ պիտի  
մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront  
l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le  
solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի  
բաղկանայ ժամանակակից, դասական եւ  
կրօնական երաժշտական կտորներէ,  
Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales  
contemporaines, classiques et religieuses, de langue française et  
arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ  
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/  
Fax: (514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



# ԱՐԱՐԱՏ ՃԱՄԲԱՐ 2019

ՇԱԲԱԹ, Օգոստոս 10--Օգոստոս 17, 2019

Մասնակցի շաբթուայ մը բացօդայ ճամբարին, ուր ինզիսրդ պիտի զգաս Հայկական մթնոլորտի մէջ եւ ուր պիտի հաստատես երկարատե բարակամութիւններ եւ ուրիշ ակամայ պիտի բաժնուիս անտրանայի



Դիմումագիրերը կարելի է հայթայթել [www.campararat.ca](http://www.campararat.ca) կայքէջէն:  
Հաճեցէք դիմումագիրերը դրկել եւ վճարումները կատարել մինչեւ Ապրիլ 1, 2019  
Բւրաբանչիւր մասնակցողի համար վճարել \$555.00:  
Տեղերը սահմանափակ են, հաճեցէք ձեր դիմումը չուշացնել

Ցաւէնլա տեղեկութեան համար հաճեցէք մեզ հետ կապ հաստատել [campararat@gmail.com](mailto:campararat@gmail.com)  
հասցեով, կամ հեռաձայնել Անի Ալթունեանին 905-891-8216, կամ դիմել ձեր ծովիսի Հոգեւոր  
Հովիսին եւ Միսական Խորհուրդին

Արարատ ճամբարին առաքելութիւնն է Գնատահայ երիտասարդին տրամադրել այնպիսի գուարթ, ապահով եւ  
դաստիարակչական միջավայր մը, ուր ան փորձառական հմտութիւն ունենայ Քրիստոնէական հաւանքին, իր Հայկական  
պատկանելիութեան, ինչպէս նաեւ կատարելագործել իր ընկերութեան, եղելեցիին ու համայնքին օգնելու յատկութիւնները:

ՊՏՈՅՑ ԴԷՊԻ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ




TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY



MAY 7, 2019  MAY 20, 2019



The Women's Guild Central Council,  
with the blessings of  
H.G. Bishop Abgar Hovakimyan,  
Primate of the Armenian Diocese of Canada,  
organizes a



**TRIP TO THE ARMENIAN HERITAGE  
SITES IN TURKEY**



(Istanbul, Rodosto (Tekirdag), Bursa, Efes,  
Cappadocia, Kayseri, Adana, Musa Dag).



Cost \$2,200 USD (double occupancy)  
\$2,600 USD (single occupancy)



Included: 13 nights accommodation at nice  
hotels, Breakfasts & dinners,  
professional guides (Armenian & English),  
Bosphorus by boat,  
transportation with high end buses,  
domestic flight.



Not included: international airfare, lunches,  
drinks, balloon tour in Cappadocia.



**Places are limited !**  
**Deposit \$500 by March 7.**  
**Full payment by March 31.**



For details, please contact the Diocese at (514) 276-9479 or [contact@armenianchurch.ca](mailto:contact@armenianchurch.ca), or  
WGCC Chair, Mrs. Anita Ohanessian at (647) 984-8568 or [anita-ot@hotmail.com](mailto:anita-ot@hotmail.com), or  
Mrs. Avda Afarian at (416) 885-0303 or [avdaafarian@gmail.com](mailto:avdaafarian@gmail.com)







**Հայց. Առաքելական  
Ս. Գրիգոր Լուսավորիչ  
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

**Եթէ ունիք հասցէի փոփոխութիւն,  
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել  
Եկեղեցւոյ քարտուղարութեան:**



**Vous avez déménagé cette année?  
S'il-vous-plaît, veuillez nous informer  
de votre nouvelle adresse.**

**Have you moved this year?  
Please do not forget to inform us of  
your new address.**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2  
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)



**ՀԱՅՑ. ԱՌԱՋ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

**CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

**ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ**

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել  
Bernard փողոցին վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3:



**PARKING**

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

**Address :** 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2